

Կ Ա Ր Ծ Ի Ք

*Նունե Գագիկի Մովսիսյանի կողմից մանկավարժական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված «Ֆիզիկայի
հիմնարար սկզբունքները և մեթոդները որպես ավագ դպրոցում սովորողների
ստեղծագործական մտածողության զարգացման միջոց» խորագրով
թեկնածուական ատենախոսության մասին*

Գիտության, տեղեկատվական և նորագույն տեխնոլոգիաների աննախադեպ զարգացման արդի շրջանում էլ ավելի է աճում կրթության՝ մի կողմից՝ շրջակա աշխարհից եկող մարտահրավերներին դիմագրավելու, մյուս կողմից՝ ազգային նկարագրի պահպանմանը և զարգացմանը նպաստող մարտավարության դերը: Այս առումով հանրակրթական դպրոցի իսկ առավել ևս ավագ դպրոցի, ժամանակակից փուլը կանգնած է սովորողների ինտելեկտուալ մակարդակի, իմացական և ստեղծագործական ներուժի բարձրացման անհրաժեշտության հիմնախնդրի լուծման առաջ: Այդ հիմնախնդրի լուծումը կապված է ուսուցման մեթոդների անընդհատ կատարելագործման, մասնավորապես, գիտության հիմնարար սկզբունքների և մեթոդների յուրացման և հետազոտական գործունեության կարողությունների զարգացման հետ, առանց որի դպրոցում ստացած միայն առարկայական գիտելիքները բավարար չեն լինի: Ուստի այսօրվա դպրոցականները, ովքեր ապագա հետազոտողներն են, ստացած գիտելիքներից բացի պետք է ունենան այնպիսի որակներ, որոնք նրանց հետագայում թույլ կտան կողմնորոշվելու տեղի ունեցող իրադարձություններում ու երևույթներում, տալու դրանց համարժեք գնահատականներ, գտնելու ճիշտ լուծումներ՝ ոչ ստանդարտ իրավիճակներում: Այս առումով մանկավարժական գիտության մեջ և պրակտիկայում առաջին պլան է մղվում ստեղծագործական անհատի ձևավորումը, հատկապես շատ կարևոր անձնային բաղադրիչի մտածողության առումով:

Ուսուցման գործընթացում սովորողների ստեղծագործական մտածողության ձևավորման ու զարգացման հիմնախնդիրները միշտ էլ համարվել է մանկավարժության և հոգեբանության կարևորագույն հիմնախնդիրներից մեկը: Այս ուղղությամբ տարվել են մանկավարժական և հոգեբանական ոչ քիչ թվով հետազոտություններ, որոնք շատ

դեպքերում առնչվում են տարբեր առարկաների, այդ թվում և ֆիզիկայի դասավանդման գործընթացի հետ:

Հեղինակի կողմից կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը միտված այդ հետազոտություններում գրեթե չեն օգտագործվում գիտության հիմնարար սկզբունքների և մեթոդների լայն հնարավորությունները:

Ահա այս բացի լրացմանն է միտված Նունե Մովսիսյանի կողմից պաշտպանության ներկայացված ատենախոսությունը, որի նպատակը ավագ դպրոցի սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման հնարավորության հիմնավորումն է ֆիզիկայի հիմնարար սկզբունքների և մեթոդների կիրառմամբ խնդիրներ լուծելիս, ինչպես նաև այդ հիմնարար սկզբունքների և մեթոդների կիրառմամբ ստեղծագործական մտածողության մակարդակի բարձրացում ապահովող խնդիրների լուծման մեթոդիկայի մշակումը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության 224 անվանում պարունակող ցանկից:

Ներածության մեջ հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, գիտական վարկածը: Ներկայացված են խնդիրները, մեթոդաբանական հիմքը, կիրառված մեթոդները, գիտական նորույթը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունները, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության փորձաքննությունը:

Ատենախոսության **առաջին գլխում**, որը նվիրված է մեթոդական և հոգեբանամանկավարժական գրականության մեջ սովորողների ստեղծագործական մտածողության հիմնահարցերին, նախ և առաջ դիտարկվում են ֆիզիկայի ուսուցման գործընթացում սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը նվիրված աշխատանքները:

Գնահատելով դիտարկված մեթոդական հրապարակումների և ատենախոսությունների մեծ արժեքը, ատենախոսը օբյեկտիվորեն հանգում է այն եզրակացության, որ դրանցում սովորողների ստեղծագործական մտածողության

զարգացման հիմնահարցերի հետազոտությունը կողմնորոշված չէ դեպի ֆիզիկա գիտության հիմնարար սկզբունքների և մեթոդների օգտագործում, ինչը մեկ անգամ ևս փաստում է ներկա հետազոտության անհրաժեշտությունը:

Առաջին գլխում ատենախոսը համակարգված կերպով դիտարկում է ստեղծագործական մտածողության զարգացման առանցքային հիմնահարցերը, որոնք մինչ այժմ արծաձված են մանկավարժական և հոգեբանական գրականության մեջ: Նախ ներկայացվում է «Ստեղծագործական մտածողություն» հասկացության ծագման ակունքները և այդ հասկացության վերաբերյալ պատկերացումները 19-20-րդ դարերի հայտնի հոգեբանների և մանկավարժների հրապարակած աշխատանքներում, որի արդյունքում կատարվում է այն եզրակացությունը, որ աշակերտի *ստեղծագործական մտածողություն* կարելի է համարել այն մտավոր գործունեությունը, որի արդյունքում նա հայտնագործում է սուբյեկտիվ նոր գիտելիք: Այնուհետև ատենախոսը ներկայացնում է խնդիրների լուծման գործընթացի հետ կապված ստեղծագործական մտածողության էական յոթ բաղադրամասերը:

Գլխի վերջում ատենախոսը դիտարկում է այն հիմնական գործոնները, որոնք ազդում են սովորողների ստեղծագործական մտածական ընդունակությամբների վրա:

Ատենախոսության **երկրորդ գլխում** քննարկվում է խնդիրների լուծման տեսության և մեթոդիկայի ընդհանուր հարցերն ավագ դպրոցում: Նախ և առաջ դիտարկվում է խնդրի և խնդրի լուծման առանցքային հասկացությունները: Տրվում է «խնդիր» հասկացության հոգեբանադիդակտիկական ընդհանուր մեկնաբանությունը: Նշվում է, որ մասնավոր դիդակտիկաներում օգտվում են «Ուսումնական խնդիր» հասկացությունից, որոնցից յուրաքանչյուրը ուսումնական գործունեության տարր է և դրա հիմնական բաղադրամասեր են առարկան, պայմանը և պահանջը: Դիտարկվում է «խնդրի լուծում» հասկացությունը և հիմնավոր կերպով ներկայացվում խնդրի լուծման դիդակտիկական գործառույթները: Ատենախոսը հանգամանորեն վեր է լուծում խնդրի լուծմանը առնչվող մի կարևոր հանգամանք ևս, այն է՝ տվյալ խնդրում որոշ ոչ էական պայմանների անտեսումը առանց որի գործնականում հնարավոր չէ ձևակերպել և լուծել որևէ ֆիզիկական ուսումնական խնդիր: Այնուհետև ատենախոսը անցնում է ավագ դպրոցում ֆիզիկայի խնդիրների լուծման մեթոդիկայի ընդհանուր հարցերի հանգամանորեն դիտարկմանը: Մասնավորապես նշելով, որ հնարավոր չէ

դպրոցականներին սովորեցնել ֆիզիկական գիտության ողջ նյութը, ուստի իմաստ ունի սովորեցնել գլխավորը՝ *գիտական իմացության մեթոդաբանությունը*: Միանգամայն տեղին ամրագրվում է, որ նման մոտեցումն առանձնապես արդարացված է ավագ դպրոցում, քանի որ մեթոդաբանության հասկացությունը և մեթոդաբանական մոտեցումներն առավել ընկալելի են հենց ավագ դպրոցի սովորողների համար:

Գլխում դիտարկվում են ֆիզիկայի հիմնարար սկզբունքների և մեթոդների կիրառմամբ խնդիրների լուծման մեթոդիկայի մանկավարժահոգեբանական մի քանի առանձնահատկություններն ավագ դպրոցում:

Ատենախոսության **երրորդ գլուխը** նվիրված է ֆիզիկայի հիմնարար սկզբունքների և մեթոդների կիրառմամբ խնդիրների լուծման մեթոդիկային ավագ դպրոցում: Նախ և առաջ մեկնաբանվում է գիտության հիմնարար սկզբունքների և մեթոդների օգտագործման անհրաժեշտության խնդիրը ֆիզիկայի ուսուցման գործընթացում: Մասնավորապես նշվում է, որ հաշվի առնելով գիտական և ուսումնական պրոցեսը հնարավոր չէ առանց գիտության սկզբունքների ու մեթոդների կիրառման, անհրաժեշտություն է առաջանում ֆիզիկայի հիմունքների ուսումնասիրման գործընթացում վեր հանել իմացության պրոցեսի կառուցվածքը, սովորողներին ցույց տալ, թե ինչ սկզբունքների ու մեթոդների օգնությամբ են ստացվում գիտելիքները և նրանց սովորեցնել օգտվել այդ սկզբունքներից ու մեթոդներից իրենց ուսումնափնացական գործունեության ընթացքում: Այնուհետև ատենախոսը հիմնավոր կերպով ներկայացնում է ատենախոսության մեջ դիտարկվող ֆիզիկայի հիմնարար սկզբունքների և մեթոդների կիրառմամբ, սովորողների ստեղծագործական մտածողության զարգացում ապահովող, խնդիրների լուծման մեթոդիկան ավագ դպրոցում: Մասնավորապես ներկայացվում է *համաչափության սկզբունքի, չափայնությունների վերլուծության մեթոդի, վերադրման սկզբունքի, նմանակության մեթոդի* կիրառումը խնդիրների լուծման և ուսուցման ժամանակ: Ներկայացվում է ուսուցման հետևյալ ընթացքը. *մեթոդի համառոտ ներկայացում → հերթականությամբ խնդրի լուծման ընթացք (ֆիզիկական կողմ գումարած մաթեմատիկական) տրվյալ մեթոդի կիրառմամբ → խնդրի լուծմամբ ստացված արդյունքի վերլուծություն*:

Ատենախոսության գործնական նշանակության տեսանկյունից թերևս ամենակարևոր **չորրորդ գլուխը** նվիրված է ատենախոսի առաջարկած հետազոտության գիտական նորույթի հիմնավորմանը և ապացուցմանը: Նախ տրվում է մանկավարժական գիտափորձի ընդհանուր նկարագիրը, վերլուծությունը: Այնուհետև ատենախոսը հերթականությամբ ներկայացնում է գիտափորձի երեք փուլերը. *արձանագրական, ուսուցողական, ստուգողական:*

Ատենախոսության մեջ մանրամասնորեն նեկայացվում է ուսուցողական փուլում անցկացված դասի պլանի օրինակ, ինչպես նաև ստուգողական փուլում տրված ստուգողական աշխատանքների օրինակներ:

Ներկայացված են վիճակագրական վերլուծության արդյունքները, որոնք վկայում են, որ փորձարարական դասարաններում, որտեղ ուսուցումը տարվել է ատենախոսի կողմից առաջարկված ֆիզիկայի հիմնարար սկզբունքների ու մեթոդների կիրառմամբ նոր մեթոդիկայով, արձանագրվել է սովորողների գիտելիքների և նրանց ստեղծագործական մտածողության ավելի բարձր մակարդակ, որն էլ վկայում է, որ ավագ դպրոցում ֆիզիկայի ուսուցման գործընթացում ատենախոսի առաջարկած հիմնարար սկզբունքների և մեթոդների օգտագործումը էապես նպաստում է սովորողների գիտելիքների մակարդակի աճին և, որ շատ կարևոր է, նրանց ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Ամփոփելով՝ կարելի է փաստել, որ Նունե Մովսիսյանի «Ֆիզիկայի հիմնարար սկզբունքները և մեթոդները որպես ավագ դպրոցում սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման միջոց» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը բարձրարժեք մեթոդական և ուսումնագիտական աշխատություն է, որտեղ հիմնավորված է ավագ դպրոցում ֆիզիկայի ուսուցման գործընթացում հեղինակի կողմից առաջարկված ֆիզիկայի հիմնարար սկզբունքների ու մեթոդների օգտագործմամբ նոր մեթոդիկայի կիրառման հնարավորությունը սովորողների գիտելիքների մակարդակի բարձրացման համար, ինչպես նաև դրա բացառիկ արդյունավետությունը սովորողների ստեղծագործական մտածողության բարձրացման կարևորագույն հիմնախնդրի լուծման գործում, ինչը լավագույնս հիմնավորված է մանրամասն մշակված և իրականացված գիտափորձի շրջանակներում:

Այժմ մի քանի դիտողություններ աշխատանքի վերաբերյալ:

1. Ատենախոսության 9-րդ էջում խոսելով ֆիզիկայի խնդիրների լուծման գործընթացում ավագ դպրոցի սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման մակարդակի ընտրված չափանիշների մասին, նշվում է երեք չափանիշ, որոնցից մեկը հետևյալն է. «Սովորողների ստեղծագործական մակարդակի և նրա հիմքը կազմող էվրիստիկական և տրամաբանական մտածական գործողությունների ձևավորման մակարդակի աճը»: Այս ամենն ընդունելով հանդերձ հարկ եմ համարում նշել, որ ատենախոսը աշխատանքում ավելի հանգամանորեն պետք է անդրադառնար մտածողության նշված ձևերի կապին, ինչն ավելի լիարժեք կդարձներ ստեղծագործական մտածողության հարցերի դիտարկումը ատենախոսության 1-ին գլխում:

2. Ատենախոսության 4-րդ գլխում (էջ 158-160) բերված են սովորողների գիտելիքների և ստեղծագործական մտածողության զարգացման մակարդակը որոշող թեստային առաջադրանքների մեկական օրինակներ: Հիշյալ խնդրի լուծման համար կան ավելի հետաքրքիր և ստեղծագործական տարրեր պարունակող թեստային առաջադրանքների օրինակներ տարբեր խնդրագրքերում և ձեռնարկներում, այդ թվում նաև բուհերի դիմորդների համար նախատեսված ֆիզիկայի շտեմարաններում, որոնցից կարելի էր օգտվել մանկավարժական գիտափորձում, որն էլ ավելի լիարժեք կդարձներ ստուգիչ գիտափորձի արդյունքները:

3. Ատենախոսության երրորդ գլխում բավականին ընդարձակ և համակարգված շարադրմամբ ներկայացված է սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը նպաստող խնդիրների լուծման մեթոդիկական ֆիզիկայի հիմնարար սկզբունքների և մեթոդների կիրառմամբ, սակայն սեղմագրում այն արտացոլված է համեմատաբար ավելի համառոտ: Կարծում եմ տեղին կլիներ ներկայացնել մեթոդիկայի կիրառման մեկ-երկու կոնկրետ օրինակ:

4. Ատենախոսության վերջում ներկայացված է գրականության բավականին ընդարձակ ցանկ, որոնց ճնշող մեծամասնության մասին հղումը առկա է ատենախոսության էջերում, սակայն գրականության ցանկում չկան կայքերի հղումներ:

Նշված դիտողությունները կրում են մասնակի բնույթ և չեն նսեմացնում ատենախոսի կատարած հետազոտական աշխատանքի արժեքը և արդյունքների կարևորությունը:


Համոզված եմ, որ Նունե Մովսիսյանի «Ֆիզիկայի հիմնարար սկզբունքները և մեթոդները որպես ավագ դպրոցում սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման միջոց» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը ստացված մեթոդական և գիտաուսումնական արդյունքների հավաստիությամբ, քննարկված խնդիրների լայն ասպեկտով և հետազոտական արդյունքների գործնական կարևորության տեսանկյունից լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ Նունե Գագիկի Մովսիսյանը արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի հայցվող գիտական աստիճանին:

Ատենախոսության սեղմագիրը ճիշտ է արտացոլում ատենախոսության բովանդակությունը:

Պաշտոնական ընդդիմախոս

մանկավարժական գիտությունների

թեկնածու, դոցենտ՝




Նաիրա Սաֆարյան

Դոցենտ Ե. Արսիսյանի ստորագրությունը հաստատում եմ

Խ. Արսիսյանի անվան ՀՊԱՀ-ի

Գիտական քարտուղար



Մարիամ Իսախրյան

21.02.2023թ.

